

Տ. ԴԱՎԻԹ ԱՐՔԵՂԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ (4 ապրիլի 2004 թ.)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Հաճապացայւ եւ սիրելի եղբայրներ ու բույրեր,

Ծաղկազարդի առավոտուն Քրիստոսի հաղթական մուրքին դեպի Երուսաղեմ բազմութիւնը ամբողջ կերպով՝ ըսելով. «Օվսաննա, Դավթի Որդի, օրհնեյալ է Ան, որ կուգա Տիրոջ անունով, խաղաղութիւն երկրի վրա եւ փառք բարձունքների մեջ բնակվող Աստուծո»:

Քրիստոսի աշակերտներու կողմն գրված չորս Ավետարանները այս մուրքին տարբեր դրվագները կապումեն, որոնց ամփոփումը կուգեմ կարարել Քրիստոսի Գալստայան այս մեծ տոնին առթիւ:

Հրեական Պատերն էր Երուսաղեմի մեջ, հրեական Զարկը: Զարկական տոները, որոնք կրկնէին ութ օրեր, եւ այնպէս հաճաքեցին էին հրեական սփյուռքի տարածքին վրա գրկվող բազմաթիւ ուխտավորներ, ուխտավորներ նաեւ Գալիլիայէն եւ Պաղեստինի մյուս գավառներէն: Հիսուս երկար ժամանակ բացակայած էր Երուսաղեմի շրջանակէն եւ հարավի կողմէն կողոզվեր դեպի հյուսիս, դեպի Երուսաղեմ խումբով մը աշակերտներու եւ համակիրներու եւ ծառայատեր փոխաններու ընկերակցությամբ:

Երկու կույրեր Երիբովի արվարձաններու մեջ կաղաղակէն՝ ըսելով. «Հիսուս, Որդի Դավթի, թող մեր աչքերը բացվին»: Քրիստոս գթալով անոնց վրա՝ կրծքէն երկու այդ կույրերը: Ապա թափորը կողոզվի դեպի Բեթանիա, հոն, ուր բարեկամ մը իրեն մահացած եւ պարանքված եւ ապա թաղված էր: Անոր Հիսուս կյանք կշնորհէ, անշուշտ, կյանք մը, որ ներթափա էր կրկին մահվան: Եւ կշարունակէ Իր քայլերը՝ նստած ամենապարզ կենդանիի վրա՝ մարակ ավանակի մը, եւ կողոզվի դեպի տաճար: Սակայն բարձունքին վրա կնայի պահ մը Երուսաղեմին, կնայի տաճարի գեղեցկության եւ կուլա Երուսաղեմ քաղաքի վրա՝ անդրադառնալով, գիտնալով, թե այդ քաղաքը պիտի կործանի եւ տաճարն ալ հետը միասին:

Իր խոսքը ուղղելով հրեա ժողովուրդի քահանաներուն՝ կըսէ. «Դուք, Երուսաղեմի մեծամեծներ, միշտ հալածեցիք մարգարէներն ու աստվածաբան մարդիկ, որոնք դրկվեցան ձեզի: Քանի անգամ ըսի ձեզի, որ չառնէք այդպիսի քայլեր», - եւ կանդորադառնա դարձեալ քաղաքի կործանմանը: Ապա կերթա տաճար եւ տաճարէն դուրս կվարար բոլոր այն մարդոց, որոնք Աստուծո տունը ավազակներու տան վերածած էին, եւ կցրէ ինչ որ կար այնպէս եւ բոլոր մասնակներու հետ միասին կաղաղակէն՝ երգելով մարգարէական այն խոսքը, որ կըսէր. «Խաղաղութիւն երկրի վրա եւ փառք բարձունքներու մեջ բնակվող Աստուծո: Օվսաննա, օրհնեյալ ըլլա Այն, որ կուգա Տիրոջ անունով»:

Այս քանի մը խոսքերն հետո օրվա խորհրդածությունը հաղթական մուրքի տոնին առթիւ պէտք է ուղղել երկու գաղափարներու.

Առաջին՝ մեսիական գաղափարը: Հրեաներու մօտ կականկալվեր միշտ Մեսիան, Փրկիչը, Ազադարարը: Սակայն այնպես տրված էին այդ ժողովուրդի գավակները, որ Մեսիան՝ Աստուծո կողմն ղրկված Ազադարարը և Փրկիչը, միայն կպարկանի հրեա ժողովուրդին: Քրիստոս, սակայն, միշտ մերժեց այդ գաղափարը և Իրեն համար խորություն և փարբերություն չկար սամարացիի և հրեայի, ազադի և ծառայի, այդ մարդու և կնոջ, որովհետև բոլորն ալ, ինչպես հեթանգային Պողոս առաքյալ շեշտեց, մին եւ Հիսուս Քրիստոսով: Մեսիական այդ գաղափարին հակառակ ընթանալով՝ չկրցան իրենց մարգարեններու բարոյական ըմբռնումները յուրացնել, և գործեցին մեծագույն սխալը պարմության մեջ՝ սպանելով Աստվածորդին:

Իսկ երկրորդ գաղափարը փաճարի մեջ րեդի ունեցող ծեսերն ու արարողություններն էին: Հրեաները կշիթեին միջոցը նպատակին հետ: Իրենց համար կարևորը ծեսը և արարողությունն էր, բայց Քրիստոսի համար փաճարը պիտի ծառայեր Աստուծո փառքին, պիտի ծառայեր պարգապես բարիք սփռելու համայն մարդկության:

Մեր ժողովուրդը, սիրելի հավատացյալներ, իր պարմության ընթացքին շատ լավ կերպով ըմբռնած է մեսիական գաղափարաբանությունը և բարոյականը և լավ ըմբռնած է, թե փաճար մը ինչի կծառայ: Մեզի համար փաճարը Ս. Էջմիածինն է, Ամենայն Հայոց Հայրապետությունն է այս Տաճարը, որու հիմքերը 1700 փարիներ առաջ դրվեցան և այս Տաճարին մեջ ծառայած են մեր եռամեծար Հայրապետները՝ Լուսավորիչները, Սահակները և ավելի վերջ եկող Հայրապետները:

Հայրապետները կմարմնացնեն, գահակալները կմարմնացնեն մեր ամբողջ պարմությունը, մեր պարմության ամենափայլուն էջերը րված են մեր ժողովուրդին մեր Մայր Աթոռի գահակալները: Բնական է, մենք կհավատանք մեր ավանդություններուն, մեր ազգային և կրոնական արժեքներուն: Մեզի համար ծեսը և արարողությունը պետք է նկատենք պարգապես միջոց՝ հասնելու համար գերագույն այն նպատակին, որ մարդ էակին փրկությունն է և Աստուծո փառքին հյուսումը:

Այս հաղթական րոնին առթիվ մենք պիտի հայցենք Տիրոջմե, որ մեր հոգևոր աչքերը բանա, ինչպես բացավ աչքերը այդ երկու կույրերուն: Պիտի խնդրենք Իրմե կյանքի շնորհում, ինչպես շնորհեց Ղազարոսի, պիտի խնդրենք առողջություն հոգվո և մարմնո:

Ըմբռնելով նաև բարոյականը մեր Տաճարին՝ մեր սերն ու հարգանքը միշտ պիտի րածենք մեր սիրեցյալ Ամենայն Հայոց Հայրապետ Ս. Տ. Գարեգին Երկրորդի, որ կմարմնացնեն մեր պարմության էջերը, էջեր, որոնք կշահվին գոհողությամբ և դժվարությամբ, և ուրախ ենք, որ մեր Հայրապետը այդ գոհողությունը հանձն առած է և լուսավորչյան րեսիլքով, մեսրոպյան ոգիով, Խրիմյանի հայրենասիրությամբ կառաջնորդե մեր Եկեղեցին Հայաստանի և Սփյուռքի մեջ:

Կհայցենք այս հաղթական րոնին առթիվ, որպեսզի մեր Հայրապետը միշտ վառ պահե իր մեջ այդ կորովը, հարաքնելու ոգին, ազգային և եկեղեցական բարձր ըմբռնումները ի փառս Աստուծո և ի վայելումն ազգիս հայոց. ամեն: